

նակն է այս), բնական մեծութեամբ, որ 1551 թ. Հոտովմայ մօտ Մ. Հիպպոլիտոս եկեղեցւոյն աւերակաց մէջ գտնուեցաւ, և մինչեւ վերջին ժամանակներս Վատիկանեան գրատան մէջ կը պահուէր, հիմակ Լատերանոյ թանգարանին մէջ է՝ իւր զատկական շրջանը՝ յունական տառերով (223էն 333) և զրուածոցը ցանկը (անկատար) քանդակուած են իրեն բազմաձգ գահուն երկու կողմանց վրայ:

Շարայարեղի

Հ. Բ. 291186ԱՆ



ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒ

ԹԻՒՆԵ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԵՄԱԳՈՒՄՆ

(Շար. տես էջ 575, 1899)

ՀԵՐՈՒՈՏՈՒ Արգոնաւորդաց թոռնւրը կը համարի ՊՄինիացիս, որոնք Լեմնոս կը բնակէին, ուսկից Հայածուելով այն Պեղատգեանցով, որոնք Աթենացւոց կանայքը առեանգեր էին, Լակեդեմոնացւոց կ'ապաւինին և անոնցմէ երկիրներ կ'ընդունին բնակութեան համար, մերձաւոր ազգակիցք ըլլալով իրարու¹: Արդ, Արգոնաւորդք, որոնք մեծաւ մասամբ Թեսալացիք էին, կը կոչուին նաեւ Մինիացիք² (Μινιαί ήρωες³), անուամբ Մինիոսի կամ Մինիասի, զոր պատմիչներն ոմանք կը համարին՝ որդի Քրիւսեայ և թոռն Քրիւսոգինեայ և Պոսիդոնի⁴. Իսկ այլք⁵ թոռն Սիսիփոսի և որդի Եւրոստի, որուն համար Եւրոստի եւս կը կոչուի Մինիոս⁶: Կան

նաեւ ուրիշներ՝ որոնք կը համարին զինքը Հայր կամ որդի և կամ եղբայր Որքոմեոսի⁷: Այս ծննդաբանութիւններէն ոմանք յայտնապէս կը ցուցնեն, թէ Մինիաս և Մինիացիք ինչ ահագին զօրութեան և հարստութեան տէր էին: Նոյնպէս, Ալմոսի գետեր՝ Քրիւսոգինեայ որդի ըլլալով Մինիաս, այնու թոռն կ'ըլլայ նաեւ Աթամանոսի՝ Որքոմեոսի թոգաւորին, որովհետեւ Ալմոս՝ Աթամանոսի եղբոր Սիսիփոսի որդին է: Արդ, զիտներ Պաւսանիասէն, թէ Աթամանոս որդի էր Եւրոստի, որուն մէկ թոռը՝ որ նոյնպէս Աթամանոս կը կոչուէր՝ Եւրոստի Տէոս քաղաքը տարաւ Որքոմեոսեան Մինիացիները և հոն գաղթականութիւն մը հաստատեց: Դարձեալ, ի՞նչ նկատներ թէ Աթամանոս կանանցմէ մին՝ Ինոիս՝ կ'ազմուի և Հարմոնիայ դուստրն էր, այն ժամանակ անժխտելի կ'ըլլայ այն ազգականութեան կապն՝ որ կար ընդ մէջ կաղմոսի, այն է՝ Հեռեանց կամ Հատեանց, և ընդ մէջ Որքոմեոսեան Մինիացւոց:

Եւ այսպէս, հին պատմութեան և առասպելայօզ զրոյցներու մեզի աւանդած տեղեկութիւնները ամփոփելով, կրնանք եղբայրացիք բաւական հաւանականութեամբ, թէ Մինիացիք ամենահին ժողովուրդ մ'էին, որոնք Պոնտոսի կողմերէն գնացին Թեսալիա կամ Մակեդոնիա, իրենց հետ տանելով անբաւ հարստութիւններ, զորս հաւաքեր կին մետաղներ հանելու և բանելու արուեստով, արուեստ մը՝ զոր նախ ի Հայաստան՝ իրենց հին հայրենիքին մէջ ուսան, և յետոյ ի զորձ զբն Պոնտոսի և Փոքր Ասիոյ մէջ՝ Անոնք՝ Մինիացիք կոչուեցան Հայաստանի Մինիացւոց անուամբ, որոնք իրենց նախնայնորներն եղան: Մերձաւոր խնամի կը կարծենք զիրենք Հատեանց. վասն զի, նախ և առաջ, Թեսալացի (Թեստալացի) և

1. Կը յիշէ նաեւ Եւստրիոս. «Գրեաց և վասն Ջատիկին՝ զչարս ժամանակաց կարգելով ի նմա, և կանոն ինչ զատկական ի ըրջան վեշտասան ամաց, յառաջին ամ ինքնակալութեան Ալեքսանդրի գնելով զսկիբլեն թուականութեանս »: Պատմ. Եկ. Գլ. 2. Գլ. 16:

2. Herodot. IV, 145.

3. Pind. Pyth. 4, 122; Apoll. Rhod. I, 709; Strab. IX, 414.

4. Apoll. Rhod. I, 1055.

5. Paus. IX, 36, 4.

6. Apoll. Rhod. III, 1003.

7. Paus. IX, 36, 6; Phereac. in schol. Pind. I, 1, 79. և այլն:

Մակեդոնացի կը կոչուին անոնք, երկու ա-
նուններ, որոցմէ առաջինն կազմուած է
Քետտա անունէն (Βετταλ'α = Χετταλ'α) և
η (λ) յաւելուած տառէն, որ առնչութեան
կամ ազգակցութեան կապը կը նշանակէ.
իսկ միւսն՝ կեղա կամ Քետա (Κεταί = Χεταί)
անունէն և Մա— (Μα—) նախդիր մասնակէն,
որ երկիր՝ աշխարհ կը նշանակէ: Երկրորդ,
Հատեանց և Մինիացաց խնամութիւնը կը
ցուցուի այն ազգականութեան կապով, որ
կար ընդ մէջ Մինիացաց և կազմուի, ինչ-
պէս վերը նշանակեցինք: Եւ վերջապէս, կը
ցուցուի այն ազգականութեամբ որ կար
ընդ մէջ Պեղագեան Արգոնաւորաց և Մի-
նիացաց, յետինքս Արգոնաւորաց թո-
ռունք ըլլալով: Ասկէ կը հետեի՝ թէ Ար-
մենեքու (Հայոց) և Արմենիայի (Հայաս-
տանի) անունը ծագած չ'է Յասոնի ընկե-
րակցող Պեղագեան—Թեսաղացի Արմենո-
սէն, ինչպէս կ'աւանդեն յոյն պատմիչք, այլ
ընդհակառակն՝ Արմենոս դիւցազն այդպէս
կոչուած է Թեսաղիոյ Արմեններէն, այս է՝
այն Մինիացիներէն որոնք Արմենիոյ (Հայաս-
տանի) Մինիացիներէն սերեր և զաղթեր են:

Դը Մորգան գիտնականն՝ երկրաբանական
և հնախօսական փաստերով կ'ապացուցանէ,
թէ ամենահին ժամանակներէ ի վեր Հայաս-
տանի մէջ կը գտնուէին երկաթ և ուրիշ
տեսակ մետաղներ, ինչպէս ըսինք մենք
վերը: Յիշեալ գիտնականն կ'աւելցնէ, թէ
Եզդպատոս, Քաղզէասան և Ասորիք չունին
երկաթի հանքեր. մինչդեռ Առաջակողմեան
Ասիոյ մէջ՝ միայն Հայաստան և փոքր Ասիա
են՝ որոնք մետաղներու ճոխ հանքեր ունին:
Բազմաթիւ նախապատմական գերեզմանա-
տուններ գտնելով նա առաջական Հայաստանի
մէջ, ուր կան նաեւ պղնձի հանքեր, այն
հաստատուն համոզումը կազմեց, թէ ի սկզբ-
բանէ հետէ միշտ ծանօթ է եղեր Հայաստանի
մէջ երկաթն, որուն գործածութիւնը կարելի
է հասցնել մինչեւ Իւրո կամ Լւրո դարը
Քրիստոսէ յառաջ: Այս պատճառաւ Դը
Մորգան կ'ըսէ, թէ «Առաջակողմեան Ասիոյ
հիւսիսային մասն եղած է՝ ամենահին շրջան-
ներուն մէջ՝ այս մետաղիս (երկաթին) ար-
տադրութեան կեդրոնը կամ գլխաւոր բով-

ըր՝»։ Ինքն ալ կ'ընդունի 'նոյնպէս՝ թէ այդ
երկաթի արտադրութեամբ ժողովուրդներն ազ-
գակիցք էին Հատեանց. «Անկարելի է ընդ-
ունել թէ Հատեանք, կ'ընէ նա, որոնք մե-
տաղներ բանող ժողովուրդներու ազգակիցք
էին... ճանչցած չըլլան երկաթը, և իրենք
ալ անով գործիներ և զէնքեր շինած չըլլան,
և թշնամոյն պէմ առնելով փոքր Ասիոյ
բոլոր ազգերը (Որոնտէս գետին վրայ եղած
ընդդէմ Հռոմէս Բէ պատերազմին մէջ)
երկաթով զինած չըլլան իրենց հիզակա-
կիցները»։

Յունաստանի Մինիացաց Հայ ծագման
մասին մեր ունեցած կարծիքին պէմ՝ մէկ
առաւելութիւն միայն կարելի է ընել, այն է՝
Հայոց ցեղն և լեզուն. որովհետեւ Հայք
ընդհանրապէս Թորգոմէ սերելու կը համա-
րուին, ինչպէս որ լեզուագիտաց ստոյգ և
առ հասարակ կարծիքն է, թէ հայերէն լե-
զուն կը պատկանի հնդեւրոպական ցեղին,
և յատկապէս երանեան ճիւղին:

Ընդունելով հանդերձ՝ թէ Հայք Թորգո-
մայ սերունդ ըլլան, ասկէ չի հետեւիր բնաւ
թէ անոնք միշտ Թորգոմայ երկրին մէջ ընա-
կած ըլլան, և ո՛չ՝ թէ այն ամէնք որոնք
Թորգոմայ աշխարհին մէջ բնակեցին են՝ ի
հարկէ Հայք են: Ըստ իրենքն՝ Սուրբ Գրիգոր
բնաւ չորոշը՝ թէ Թորգոմ հ իւր որդիքն
ուր, ե՛րբ և որչափ ժամանակ ապրեցան ։
Աստուածաշունչն ամենեւին չի զբաղիր այն
խնդիրներով, թէ արդեօք ուրիշ ժողովուրդ-
ներ և ուրիշ ցեղէ ազգեր եկան բնակեցան
այն երկիրներուն մէջ, որոնք յետոյ հա-
տատուն բնակավայր պիտի ըլլային Թոր-
գոմայ սերնդոց և Հայաստան անունը պիտի
կրէին. այս և նման խնդիրները կը թողու-
նա ազգագրաց և պատմիչաց հետազոտու-
թեան և ուսումնասիրութեան: Ուստի կրնանք
ապահով կերպով հաստատել, թէ Հայաս-
տանի կամ Այրարատ աշխարհին նախկին
ժողովուրդները եղան Մինիացիք, և թէ այդ

1. Congrès internat. d'Anthrop. et d'Archéol.
préhist. Dixième session. 1889, էջ 290.

2. Անդ :

Միննացիք նոյն են Պեղասպեան Մինիացւոց հետ, հետեւաբար Հատեանց և Քամեանց* ազգակից, և բնաւ ո՛ր և է առնչութիւն չունին սեմական կամ արիական ժողովրդոց հետ։ Կը հաստատենք զարձալ, թէ Ակկադացիք, որոնք նոյնպէս Քամեանք են, Միննացւոց երկրէն կամ Հայաստանի բարձրատափէն իջան Քարդղէաստան, և հետեւաբար Միննացւոց՝ նախկին լեզուն նոյն էր Ակկադաց և Հատեանց լեզուին հետ, ի բաց առեալ գաւառաբարբառներու բնական տարբերութիւնները։

Ուստի երբ ազգագրական կամ լեզուաբանական գրեանց մէջ կարգանք, թէ Հայք կը պատկանին արիական — երանեան առնման խմբին, — որովհետեւ հայերէնն իբր հնչեւորոպական ցեղին պատկանող բարբառ մը ձանշցում է, — պէտք է քիտնալ թէ այն տեղ կը խօսուի՝ ո՛չ թէ Հայաստանի նախկին ժողովրդոց լեզուի մասին, այլ ուրիշ աւելի յետին ժամանակներու ժողովրդեան մը և լեզուի մասին, որ եկաւ բնակեցաւ ամենահին Հայոց մի և նոյն երկրին մէջ։ Ասկէ յառաջ եկաւ լեզուաց և ցեղերու խառնուրդ մը, յորում մար—արիական տարրն զօրանալով՝ խեղդեց իւր մէջ ընկի հայ—քամեան կամ ակկադացի տարրը։ Ակկադացի կ'ըսենք, որովհետեւ Ակկադք միշտ անջինջ պահեցին մէջերնին Հայաստանի յիշատակը, իբրեւ իրենց նախկին հայրենեաց և ծննդավայրին։ Գրեթէ Գրիստոսէ ութ զար յառաջ, կ'ըսէ Սէյս, Հայաստանի մէջ կը բնակէին զեռայնպիսի ազգեր՝ որոնք արիական լեզուներ չէին խօսեր. միայն զար մը յառաջ մտան Մարք այն երկրին մէջ, զոր Ակկադացիք — որոնք շատ լեզուներէ խառն լեզու մը կը խօսէին — իրենց ցեղին իբրու խանձարուրդը կը նկատէին, և որ յետոյ ժամանակաւ բնակավայր եղաւ Արիական — Մարաց։ Նոյն

խակ Ալիս ցետին արեւելակողմը՝ նորեկ ժողովուրդներուն Հայաստանը գրաւելն շատ ժամանակ վերջը՝ ո՛ր և է արիական տարր բնաւ չէր գտնուեր¹։

Ինչ որ ըսինք Հայաստանի նախկին ժողովրդոց և անոնց բարբառի մասին՝ համեմատութեամբ արիական ցեղերու լեզուին և աւելի ուշ ժամանակներու զաղթականութեան, նոյնը կրնանք ըսել նաեւ բոլոր շրջակայ երկիրներու, և նոյն իսկ Արքիպեղազոսի կղզեաց, Յունաստանի և Իտալիոյ նախկին ժողովրդոց համար. որովհետեւ սեմական և արիական ազգերու զաղթելն յառաջ ի հովիտ Եփրատայ և Տիգրիսի, յԱսորիս, յԱւարիս և նախայիշեալ երկիրներու մէջ, աւելի կամ նուազ երկար ժամանակի մը շըրջանին մէջ, զրեթէ այդ բոլոր երկիրները կը բնակէին քամեան ցեղեր, այլ և այլ անունաց ներքեւ, որոնց ամենուն բարբառը հիմնապէս նոյն էր՝ քամեան լեզուն, այլ իւրաքանչիւր ցեղ ունենալով իրենց յատուկ գաւառաբարբառներու տարբերութիւնները։

Փալով Հայաստանի, իրեն առաջին բնակչաց քամական ծագում ունենալը անժխտելի է. որովհետեւ վանի սեպաձեւ արձանագրութիւնք ճիշդ նոյն լեզուով գրուած են՝ ինչ որ կը գտնենք հին Քարդղէաստանի մէջ, որ է՝ քամեան լեզուով։ Այսպէս Բալլինսըն²։ Իսկ արիական տարրին ներս մտնելը և հայերէնի հետ ձուլումը՝ նոյն իսկ Բալլինսըն կը համարի եղած՝ Բուր կամ Էուր գարուն մէջ Քրիստոսէ յառաջ։ Եւ թէպէտ հայերէն լեզուին մէջ ամենէն աւելի տիրող տարրն է երանեանն, այլ այնու հանդերձ կը գտնուին նաեւ քամական տարրեր, որմէ կը հետեւի թէ հայ ազգն զանազան ցեղերու խառնուրդ մ'է։

Հերոդոտոսի կարծիքն՝ թէ Հայք Փոնիկացւոց զաղթականութիւն մ'են³ հաւանական չէ, և Ստեփանոսի բելզանդացոյ բերած փաստն՝ թէ Հայոց արտասանութիւնն շատ

* Քամիտ կամ համիտ, (hamitico), զոր յուսածիս առաջին մասին մէջ խամիտ, խամիտքեմ, և այլն, զորք էինք, հռչագոյն է բաւել՝ Քամեանք, և այլն։

Ծ. Թ.

1, Sayce, *Introd. to the Science of Language*,

vol. I, էջ 307.

2. Rawlinson, *Herodotus*, vol. I; Essay XI, էջ 677 (VI) Գ. տպագր.

3. Herodot. VII, 78,

կը նմանի փոխադասուց տրտաւանութեան, շապաղացիներն բնաւ Հայոց փոխադասի ծագումը¹ :

Ընդհանրապէս պատմական անժխտելի փաստներով կրնայ ապացուցուիլ, թէ արեւմտեան Ասիոյ բոլոր ժողովուրդներն ալ աւանդաւոր ժամանակներէ ի վեր, ո՞նէ յառաջ եւ ո՞նէ յետոյ, զանազան ազգերէ խառնուրդներ են, որով իրենց լեզուներն եւս այլ եւ այլ լեզուաց խառնուրդ եւ ձուլում մ'են. Հետեւաբար Հայաստանի կամ Պոնտոսի, Կապուզովիոյ կամ Կիլիկիոյ, Փոնտիոյ կամ Լիդիոյ ժողովրդաց վրայ խօսելու ժամանակ՝ հարկ է որոշել ժամանակները, եթէ չենք ուզեր ինկնայ պատմական եւ ժամանակագրական վերականգնելու եւ անհեթեթ անտեղծութեանց մէջ։ Երբոր հինք եւ նորք կ'ըսեն մեզ, թէ Փոնտացիք Եւրոպայէն անցեր են յԱսիա, ինչպէս նաեւ Բիւթանացիք, եւ թէ այս երկու ազգերն ալ Թրակացիք են, մեզի համար մթին եւ անորոշ եղելութիւն մի կը հաստատեն։ Եւ յիշուի կը գրէ Ստրաբոն, թէ Փրոպէս եւ Բրոպէս մի եւ նոյն անունն է, եւ առաջինն՝ երկրորդին տօնական ձեւն է։ Կը հաստատէ նոյնպէս, թէ Բիւթանացիք, Թիւնացիք եւ Մարիանդինացիք՝ Թրակացիք են, որովհետեւ Թիւնացիք եւ Բիւթանացիք իւր ժամանակներն ալ կը գտնուէին Թրակիոյ մէջ։ Նախ քան Ստրաբոն՝ Հերոդոտոս կը գրէր թէ Փոնտացիք, Մակեդոնիոյ մէջ կը բնակէին Բրոպացիք անուամբ. եւ թէ Բիւթանացիք Թրակացիքն էին, Մակեդոնիոյ Ստրիմոն գետին եզերքներէն եկած, որուն համար նախ եւ առաջ Ստրիմոնացիք կոչուեցան²։ Թուրքիկիւն³, Գեռնիոն⁴ եւ այլ մասնագիրք նոյն բաները կը կրկնեն։ Իսկ արդի ազգագիրք եւ լեզուաբանք՝ Թրակացուց լեզուն Հնդեւրոպական լեզուաց ցեղին մէջ կը դնեն. ապա ուրեմն Փոնտացիք, Թրակացիք, Բիւթանացիք եւ Մարիանդինացիք արիական ժողովուրդներ էին։ Նոյն բանը

պէտք է բռնել նաեւ Հայոց համար, որովհետեւ Հերոդոտոս եւ այլք, ինչպէս ըսինք վերը, փոխադասի զաղթականներ կը համարին զՀայս։

Արդ, եթէ ուզուի աշխարհագրորէն իւր եւրոպացի նկատել այդ ժողովուրդները, մեզի համար ո՞նէ է գոտարութիւն չկայ այդ մասին. բայց եթէ ուզուի հաստատել թէ հասարակապէս թէ՛ ցեղով եւ թէ լեզուով եւրոպացիք էին, այն է՝ արիականք, այն ժամանակ չի կրնար ճշմարիտ ըլլալ այդ, մանաւանդ ժամանակագրական տեսակետով։ Եթէ Փոնտացիք՝ Փոքր Ասիոյ մէջ Թրակացիք ըլլալուն համար՝ եւրոպացի են, հարկ էր նախ ապացուցանել թէ Թրակացիք ազգագրորէն եւրոպացի էին, քան մը՝ որ մինչեւ ցարդ ոչ ոք հաստատելու եւ ապացուցելու է։ Այն մի քանի փոնտացի (նոյն է՝ Թրակացի) բառերը, որոնց արիական ծագում ունենալը միշտ ակնյայտնի չէ, եւ որոնք սովորաբար մէջ կը բերուին՝ Փոնտացուց եւ Թրակացուց արիական ծագումը հաստատելու համար, չափ ստակաւորութիւն են, որով կարելի է թէ բնիկ փոնտացի կամ Թրակացի չըլլան, այլ արիական բառեր՝ որոնք յետին դարերու արիական ժողովրդաց հետ ունեցած փոփոխակի առնչութեանց եւ վաճառականութեան միջոցով իրենց մէջ մուտ գտեր են։ Այսպէս նաեւ երբ Հերոդոտոս փոնտացի զաղթականներ կը կոչէ Հայերը, պէտք է գիտնալ թէ այդ զաղթականութիւնը եղած է Զուրաբուն մէջ՝ Քրիստոսէ յառաջ, որով համեմատաբար շատ ուշ ժամանակ եղած եւ մեզի համար խնդրէ պուրս է։ Արդ, Հերոդոտոս, Ստրաբոն եւ անոնց հետեւողք իրենց կարծիքը հաստատելու համար ուրիշ փաստ չունին, բայց միայն Ասիոյ եւ Թրակիոյ մէջ գտնուած ժողովրդաց անուանց նմանութիւնը, որ հաւասարապէս կրնայ անոր հակառակն ալ հաստատուիլ. այսինքն թէ, այդ ազգերն կամ իրենց անուանք Ասիայէն անցած ըլ-

1. Steph. Byz. 'Αρμενία. Τῇ φωνῇ πολλαὶ φρυσὶ ζοῦσι.

2. Herodot. VII, 75,

3. Thucyd. IV. 75.

4. Xenoph. Anab. VI. 4.

լան ի թրակիւս Հետեւաբար բոլոր խնդիրը կ'ամփոփուի միայն լեզուին մէջ, որ է՝ իբր թէ փոխազատեց և թրակացեց լեզուն աւրիական ցեղին պատկանի։ Սակայն, միւս կողմանէ, երբէք ապացուցուած չէ այդ խնդիրը, և ընդհակառակն բոլոր Հին աւանդութիւններ կը հաւաստեն միզ՝ թէ փոխաշինք փոքր Ասիոյ ամենահին ժողովուրդն են, Հայոց մէկ տերունիք և գաղթականութիւնը, որով իրենց լեզուն ալ՝ Հայերէնին նման՝ ոչ արեւական և ոչ սեմական ցեղին կը պատկանի։



ԱՆԿԻԻՐԻԱ



ԱՆԿԻԻՐԻԱ կամ ԷՆԿԻԻՐԻԱ. Գղ. ANCYRE. կամ ANGORA. Թ. انقرة. — Հնութեամբն և բազմադիմի զէպքերովն ի հունց մինչև ցարզ

երեւելի հանդիսացած է քաղաքս, որ երբեմն մայրաքաղաք էր Գաղատիոյ, և այժմ՝ զլիսաւոր և վաճառական քաղաք համանուն վիլայէթի։ Յոյժ հոշակ ունեցած է քաղաքս փոխգիւղի անկախութեան ժամանակ, հիմնարկութեան թուականն որով չի գիտցուիր, վասն զի, այս նկատմամբ մինչև ցարզ ծանօթ Հին մատենագրաց տուած տեղեկութիւնք, համարուած են լոկ առասպելախառն աւանդութիւններ։ Պաւսանիաս կ'ըսէ, թէ Անկիւրիոյ հիմնադիրն եղած է Կորդիոսի որդին՝ փոխգիւղի Միդաս թագաւորը, որ այստեղ Արամազդայ համար կառուցուելիք տաճարի մը հիմն փորել տուած ժամանակ, զտաւ խարխիւ մը, և այդ պատճառաւ քաղաքս անուանեք է խարխիս (յն. Ἀγκυρα) որ ըստ մեր հնչման եզեր է Անկիւրա և Անկիւրիա։ Ապոլլոնիոս կարիացի պատմագիրն ալ, այս խարխիւն կը համարի մին այն խարխիւններէն, զորս Հին Գաղղիացիք կամ Կեդաք բերած էին, Պտղոմէոսէն զրկուած եգիպտական նաւատորմիլին զէմ իրենց ըրած յաղ-



Անկիւրիոյ տեսարան :

թութեան իրեն նշանակ։ Սակայն այս ստուգաբանութիւնն ստեղծագործեալ կը թուի, որովհետեւ քաղաքս նոյն անունն ունէր նաեւ Մեծին Աղեքսանդրի ժամանակ, որ Անկիւրիոյ գիմացը կեցաւ, Պափազունիացոց պատգամաւորները ընդունելու համար։ Աւելորդ կը համարինք, յիշել աստ քաղաքիս ծագ-

ման մասին պատմուած ուրիշ դրոյցներ։ Հռովմէական տիրապետութենէն առաջ Անկիւրիա կառուցուած էր այժմեան բերդատեղւոյն վրայ. Հռովմայեցիք զայն ընդարձակեցին և բերդի պարիսպներն երկնցուցին մինչև վաշտը։ Պատմական անթիւ զէպքեր ունեցած է քաղաքս ի հունիմ, որոնք մեզ